ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2020թ. մարտի 12-ին, N 29

ք.Աշտարակ

ՆԱՐԻՆԵ ՄԻՍԱԿՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՕՀԱՆԱՎԱՆԻ Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109–րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Օհանավանի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար 2020 թվականի մարտի 9-ին անցկացված մրցույթի արդյունքները և Ն. Միսակյանի 2020 թվականի մարտի 11-ի անձնական դիմումը՝ ***որոշում եմ.***

2020 թվականի մարտի 12-ից Նարինե Հարությունի Միսակյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Օհանավանի Ս.Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ լուծելով 2020 թվականի հունվարի 10-ին նրա հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ